ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1, հեռ.՝ (+374 10) 514 101, 514 200, ֆաքս՝ (+374 10) 545 944, էլ.փոստ՝ inbox@yerevan.am

№ 01/61-2271 «20» 03 2013թ.

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՆԱԽ... ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
...ԲԱԺԻՆ
ՄՏԻՑ № 09/3852-13
«20» 03 2013թ.

ՀՀ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ,
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գևորգյան

Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի N 1098-Ն որոշմամբ սահմանված կարգով Ձեր քննարկմանն է ներկայացվում Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի հոկտեմբերի 31-ի «Երևան քաղաքի Այվազովսկու փողոցի հիմնանորոգման ծրագիրը հաստատելու մասին» N 520-Ա որոշմամբ՝ Երևան քաղաքի ավագանու հավանությանն արժանացած «Երևան քաղաքում գտնվող պետական՝ սեփականություն համարվող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից ստացված միջոցների հաշվին Երևան քաղաքի Այվազովսկու փողոցի հիմնանորոգման» ծրագիրը:

Հաշվի առնելով վերոգրյալը խնդրում եմ սահմանված կարգով ծրագիրը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը:

Կից ներկայացվում են Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի հոկտեմբերի 31-ի «Երևան քաղաքի Այվազովսկու փողոցի հիմնանորոգման ծրագիրը հաստատելու մասին» N 520-Ա որոշումը, «Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող, պետական սեփականություն համարվող անշարժ գույքի մասնավորեցումից ստացված միջոցների տնօրինման ծրագրին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը և համապատասխան տեղեկանքները, սահմանված կարգով փորձաքննություն անցած Այվազովսկու փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը, ինչպես նաև աշխատանքների իրականացման կապալի, որակի նկատմամբ տեխնիկական և հեղինակային հսկողությունների ծառայությունների ձեռքբերման պայմանագրերի պատճենները:

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Կատ.՝ Ռ. Թաղևոսյան
Հեռ. 514 129